ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ IV, № 2, 1951 г. Биол. и сельхоз. науки

Կ. Պ. Մուշեղյան

# ՌՈՒՍ ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ի. Պ. ՊԱՎԼՈՎԸ

(Մահվան 15-ամյակի առթիվ)

*1936 թ. փետրվարի 27-ին Լենինգրադում մահացավ ռուս մեծ ֆիզիոլոգ ակադեմիկոս Իվան Պետրովիչ Պավլովը։*

*Մտքի այդ հսկան մեկն է այն պայծառ դեմքերից, որոնց անունները ապրում են դարերով։*

*Հայրենական պատերազմի ամենածանր օրերին, երբ ֆաշիստական հորդաները սպառնում էին մեր հայրենիքի խաղաղ ու շինարար կյանքին, այդ օրերին ընկեր Ստալինը մատնանշելով ռուս մեծ ժողովրդի խիզախությունը և ազատարար դերը, թվարկելով նրա լավագույն զավակներին՝ Լենինին, Գերցենին, Պուշկինին, Սուվորովին, Սեչենովին և ուրիշ մեծագույն հանճարների անունների հետ մեկտեղ մատնանշեց և Իվան Պետրովիչի անունը։*



Ի. Պ. Պավլով

*Անցյալ տարի սեպտեմբերին մեր լայնածավալ հայրենիքի բոլոր վայրերում մատնանշվեց մեծ գիտնականի ծննդյան 100-ամյակը։*

*Այս տարի հունիսի 28-ից մինչև հուլիսի 4-ը տեղի ունեցավ ՍՍՌՄ գիտությունների և բժշկական գիտությունների ակադեմիաների միացյալ սեսիան նվիրված Ի. Պ. Պավլովի ուսմունքին և նրա հետագա զարգացմանը։*

*Մեծ են Պավլովի ծառայությունները առաջավոր գիտության զարգացման գործում։*

*Սեչենովը, ապա Պավլովն առաջինն էին, որ գիտական փորձերի հիման վրա բացահայտեցին մարդու հոգեկան գործունեության մատերիալիս-*

տական էությունը։ Իվան Պետրովիչն այդ համաշխարհային պատմական նշանակության անհերքելի հարցերի լուծման ընթացքում հետևողական պայքար տարավ ռուսական, եվրոպական և հատկապես ամերիկյան ռեակցիոն ֆաշիստական գիտնականների՝ վեյսմանա-մորգանիստների դեմ և ջախջախեց նրանց դրույթները։

Իվան Պետրովիչ Պավլովը ծնվել է 1849 թվի սեպտեմբերի 26-ին, Ռյազան քաղաքում։ Միջնակարգ կրթությունն ստացել է իր ծննդավայր քաղաքում։ 1870 թվին ընդունվել է Պետերբուրգի համալսարանի բնագիտական ֆակուլտետը։ Դեռ ուսանողական նստարանից նրան հայտնի էին Դարվինի աշխատանքները։ Ուսանողական շրջանում նա արդեն տարված է ռուս ականավոր ֆիզիոլոգ Սեչենովի աշխատություններով։

2-րդ կուրսից Պավլովն զբաղվում է ենթաստամոքսային գեղձի նյարդերի ֆիզիոլոգիական ուսումնասիրությամբ և հայտնաբերում է նրա լրիվ ֆունկցիան, որի համար նա պարգևատրվում է ոսկե մեդալով։

Համալսարանի բնագիտական ֆակուլտետն ավարտելուց հետո նա ընդունվում է Ռազմաբժշկական ակադեմիա (2-րդ կուրս), որն ավարտում է 1879 թվին։ Ակադեմիայում՝ իր գիտական աշխատանքների համար Պավլովը կրկին արժանանում է ոսկե մեդալի։ Նա իր արտակարգ ընդունակությունների շնորհիվ պահվում է ակադեմիայում որպես գիտական աշխատող։ Ի. Պ. Պավլովի դիսերտացիոն աշխատանքը նվիրված էր սրտի ներվավորման հարցերին։ Դիսերտացիան պաշտպանելուց հետո նա մնացել էր անգործ։ Իր հսկայական ծրագրերն իրագործելու համար չուներ ամենատարրական հնարավորություն։

Այս դժվարին հարցում նրան հյուրընկալում է ժամանակի ականավոր կլինիցիստ Բոտկինը։ Պավլովն, այստեղ, փայտյա բարաքներում հիմնում է իր առաջին լաբորատորիան, որտեղ իսկապես աշխատանքը եռում էր։

Գավառներից գործուղված պրակտիկ բժիշկները աշխատում էին տեղ գտնել Բոտկինի կլինիկայում, Պավլովի մոտ, իրենց համար դիսերտացիոն թեմաներ ստանալու նպատակով։ Նրանք համոզված էին, որ իրենց աշխատանքներն այստեղ ապարդյուն չեն անցնի։

Չնայած նրան, որ արդեն կանխորոք Իվան Պետրովիչն ընտրված է որպես Տոմսկի համալսարանի ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, սակայն ժողովրդական լուսավորության մինիստր Դելյանովը չի հաստատում նրա թեկնածությունը, նրան համարելով քաղաքականապես վտանգավոր մարդ։

Մի շարք անհաջողություններից հետո միայն 1890 թվին Պավլովն ընտրվում է ռազմաբժշկական ակադեմիայի ֆիզիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, իսկ հետագայում նշանակվում է Պետերբուրգում նոր կազմակերպված էքսպերիմենտալ բժշկության ինստիտուտի ֆիզիոլոգիայի բաժնի վարիչ։

Պավլովի գիտական ձևավորման խնդրում մեծ դեր խաղացին ռուս ֆիզիոլոգներ Սեչենովը, Օվսյաննիկովը, կլինիցիստ թերապևտ Բոտկինը և անգլիացի փիլիսոփա Ջ. Լյուիսը։

Սեչենովը նրա մեջ ձգտում արթնացրեց կենդանիների և մարդու ուղեղի գործունեությունն ուսումնասիրելու գործում։ Բայց Իվան Պետրովիչն իր ուրույն ճանապարհով անդրադարձավ այդ խնդիրներին և իր մշակած հատուկ մեթոդիկայով այն ուսումնասիրեց։ Ականավոր կլինիցիստ

թերապևտ Բոտկինը նրա մեջ սիստեմատիկ և հարատև ձգտում առաջացրեց կլինիկական բժշկության մեջ լաբորատոր էքսպերիմենտալ տվյալներն օգտագործելու հարցում: Այդ արտահայտվեց ոչ միայն ստամոքսա-աղիքային տրակտի ուսումնասիրության, այլև հիվանդագին պրոցեսներում նյարդային սիստեմի նշանակության մեջ:

Ակադեմիկոս Ովսյաննիկովը խթան հանդիսացավ երիտասարդ Պավլովին զբաղվելու ստամոքսա-աղիքային տրակտի ուսումնասիրությամբ, իսկ մյուս կողմից վիրաբույժ կլինիցիստ Բոտկինի մեթոդով նա տիրապետեց տեղից սովորեցրեց կլինիկային:

Այսպիսով, ռուսական գիտության մեջ ականավոր այս ներկայացուցիչները Պավլովի համար ստեղծեցին այն կայուն բազան, որը հետագայում հիմք հանդիսացավ նրան ստեղծելու այն հայտնի գիտությունը, որին այսօր մենք անվանում ենք Պավլովյան ֆիզիոլոգիա:

Ի. Պ. Պավլովն ուսումնասիրել է կենդանու և մարդու ֆիզիոլոգիայի մի շարք բնագավառները: Սակայն նրա սիստեմատիկ և ամենանշանավոր հետազոտությունները վերաբերվում են ֆիզիոլոգիայի երեք բաժիններին՝ արյան շրջանառության, մարսողական գլխավոր գեղձերի և գլխուղեղի մեծ կիսագնդերի ֆիզիոլոգիային:

Արյան շրջանառության և սրտի ներվավորման հարցերի ուսումնասիրությամբ Պավլովը նվիրել է իր գիտական գործունեության առաջին շրջանը, նա այդ խնդիրներով զբաղվել է 14 տարի: Հանճարեղ գիտնականը յուր համոզեցուցիչ փորձերով ցույց տվեց կենտրոնական ներվային սիստեմի առաջնակարգ դերը սիրտանոթային սիստեմի ինքնականոնավորման խնդրում: Իվան Պետրովիչը նախ և առաջ ցույց տվեց սրտի կենտրոնախույս ներվերի մեջ նրա գործունեությունն ուժեղացնող և թուլացնող ներվաթելերի առկայությունը: Այս աշխատանքները, ինչպես և հետագայի ուսումնասիրությունները ստամոքսաաղիքային տրակտի ներվավորման վերաբերյալ, Պավլովին թույլ տվեցին առաջ քաշելու կենտրոնական ներվային սիստեմի տրոֆիկ (սնուցող) ֆունկցիայի գաղափարը: Նրա կարծիքով օրգանիզմի յուրաքանչյուր օրգան կենտրոնական ներվային սիստեմից ստանում է երեք տեսակի ներվավորում՝ շարժական կամ սեկրետոր, անոթաշարժ և տրոֆիկ:

Ի. Պ. Պավլովի կողմից առաջին անգամ բացահայտած տրոֆիկ ներվավորման գաղափարը հետագայում խորապես ուսումնասիրեցին նրա աշակերտներ—ակադեմիկոսներ՝ Լ. Ա. Օրբելին և Ա. Դ. Սպերանսկին առաջինը ֆիզիոլոգիայում, երկրորդը պաթոլոգիական պրոցեսներում: Օրբելին օրգանների վրա տրոֆիկ ազդեցությունը վերագրում էր միայն սիմպատիկ ներվերին, իսկ Սպերանսկին՝ սոմատիկ ներվերին:

ՍՍՌՄ և Բժշկական գիտությունների ակադեմիաների միացյալ սեսիան խիստ քննադատեց այս հարցում թե՛ Օրբելուն և թե՛ Սպերանսկուն, որ երկուսով էլ ընկել են ծայրահեղության մեջ և հեռացել են Պավլովյան հիմնական դրույթներից, որի համաձայն կենտրոնական ներվային սիստեմից տրոֆիկ իմպուլսներ կարող են գալ թե՛ սոմատիկ և թե՛ սիմպատիկ ներվերով:

Իվան Պետրովիչն ուսումնասիրելով սրտի զգացող ներվերը ցույց տվեց անոթներում և սրտային աղեղի վրա տարածված թափառող ներ-

*վերի զգացող ճյուղերի (պրեսոր և դեպրեսոր) նշանակությունը սրտի և անոթների ներդաշնակ գործունեության խնդրում։ Այս աշխատանքներով Պավլովը վերջնականապես ապացուցեց սրտանոթային սիստեմի ռեֆլեկտոր կապը կենտրոնական ներվային սիստեմի միջոցով։ Պավլովի կողմից բացահայտած այս ռեֆլեկտոր մեխանիզմները միանգամայն բացատրում են ֆիզիոլոգիական և պաթոլոգիական պրոցեսներում սրտանոթային սիստեմի մի շարք ինքնականոնավորող գործունեություններ, ինչպես, օրինակ, սրտի արատների դեպքում կոմպենսացիաները։*

*Այսօր, երբ սովետական առաջավոր գիտությունը մահացու հարված է հասցրել ռեակցիոն Վիրխովի բջջային պաթոլոգիայի տեսությանը և առաջ քաշելով Սեչենովի, Բոտկինի և Պավլովի «ներվիզմ»-ի տեսությունը պաթոլոգիական պրոցեսներում, չափազանց մեծ արժեք է ստանում Պավլովի կողմից բացահայտած անոթների զգացող ներվերի (քիմիոռեցեպտոր, թերմոռեցեպտոր)* դերը կենտրոնական ներվային սիստեմի կողմից հիվանդության դեմ պայքար կազմակերպելու գործում:

*Հիվանդության ընթացքում ախտածին մանրէները կամ նրանց տոքսինները շրջում են արյան անոթներում, հետևապես անոթների ներսի երեսի այդ հսկայական դաշտից, զգացող ներվերով (քիմիոռեցեպտորներ) անընդհատ գրգիռներ են ուղարկվում գլխուղեղին և այնտեղից պաշտպանողական, պայքարի իմպուլսներ են գալիս պերիֆերիան, որտեղ փոխվում է բիոքիմիան, ուժեղանում է լեյկոցիտոզը, իմուն մարմինների առաջացումը և այլն։ Իհարկե, չի ժխտվում միկրոբի կամ նրա տոքսինի անմիջական ազդեցությունը ներվային բջջի վրա (ցույց հիվանդության վերջին շրջանում)։*

*Վերջերս մեր և Անդրեասյանի կողմից դիֆտերիային անատոքսինով և տիֆովակցինայով կատարված փորձերն իրոք ցույց են տալիս անոթների քիմիոռեցեպտորների և կենտրոնական ներվային սիստեմի վերը հիշված կապը։*

*Ի. Պ. Պավլովի գիտական գործունեության երկրորդ էտապը դա մարսողական օրգանների գլխավոր գեղձերի ֆիզիոլոգիայի ուսումնասիրությունն է։ Մինչ Պավլովը չափազանց աղոտ պատկերացում գոյություն ուներ մարսողական օրգան սիստեմի ֆիզիոլոգիայի բնագավառում։ Փորձերը կատարվում էին անընական պայմաններում, կենդանուն քնացրած, արյունոտ ճանապարհով։*

*Իվան Պետրովիչն առաջինն էր, որ ֆիզիոլոգիայում առաջ քաշեց սինթետիկ մեթոդը։ Պավլովը նախ և առաջ խիրուրգիական օպերացիաների միջոցով մշակեց մարսողական գեղձերի ֆիստուլային մեթոդը, ինչպիսիք են՝ թքագեղձի, պանկրեասի, լեղա-ծորանի ֆիստուլները, մեկուսացված փոքր ստամոքսը, կերակրափողի հատումը ստամոքսի ֆիստուլայի զուգորդությամբ, աղիքային բազմաֆիստուլյան և այլն։*

*Այս մեթոդը հնարավոր դարձրեց ուսումնասիրել այդ գեղձերի գործունեությունը, քանի որ չէր խանգարվել նրանց ներվավորումը և կապը անոթների հետ, և, որ գլխավորն է, կենդանին գտնվում էր համեմատաբար նորմալ վիճակում կապը արտաքին աշխարհի հետ պահպանված։*

*Իվան Պետրովիչը հետևողականորեն ուսումնասիրեց մարսողական օրգանների գլխավոր գեղձերի ֆունկցիան, պարզեց այդ գեղձերի գործու-*

նեության հիմնական օրինաչափությունները։ Սակայն նա չբավարարվեց լոկ փաստերի կուտակումով, նա թափանցեց այդ փաստերի ծագման օրինաչափությունների մեջ, համառորեն փնտրելով նրանց կառավարող օրենքները և գտավ դրանք։

Պավլովի կողմից բացահայտված օրինաչափությունները ստամոքսա-աղիքային տրակտի գործունեության նկատմամբ բոլորովին նոր էջ բացեցին ֆիզիոլոգիայում և հսկայական նշանակություն ունեցան կլինիկական բժշկության մեջ ստամոքսա-աղիքային հիվանդությունների բուժման և դիետիկայի բնագավառներում։

1897 թվին Իվան Պետրովիչը գրեց իր հռչակավոր գիրքը «Դասախոսություններ մարսողության գլխավոր գեղձերի մասին»։ Այդ աշխատությունը թարգմանվեց եվրոպական մի շարք լեզուներով։ 1904 թ. այս աշխատության համար նա ստացավ իր ժամանակ հայտնի Նոբելյան մրցանակը, որը տրվում էր առավել արժեքավոր գիտական աշխատությունների համար։

Ակադեմիկոս Պավլովը, բացահայտելով ստամոքսաաղիքային տրակտի գեղձերի գործունեության գլխավոր օրինաչափությունները, հետագայում անցավ կենդանիների կենտրոնական նյարդային սիստեմի և հատկապես ուղեղի կեղևի ֆիզիոլոգիայի ուսումնասիրությանը և իր կյանքի վերջին 30 տարիները նվիրեց այդ գործին, ստեղծելով մի կուռ ուսմունք պայմանական ռեֆլեքսների մասին։

Ի. Պ. Պավլովը մարսողական պրոցեսները ուսումնասիրելիս նկատեց, որ փորձի ենթակա կենդանու մոտ թուքը կամ ստամոքսահյութը սկսվում է արտադրվել ոչ միայն սնունդը ծամելու կամ կուլ տալու ժամանակ (բնածին ռեֆլեքս), այլև այն հեռվից տեսնելիս կամ հոտն զգալիս (պայմանական ռեֆլեքս)։

Կենդանու այսպիսի վարքը առաջներում համարում էին «հոգեկան պրոցեսներ», կենդանու ներքնաշխարհում գերբնական ուժերի միջնորդությամբ կատարվող պրոցեսների արդյունք և հնարավոր չէին համարում ուսումնասիրել ֆիզիոլոգիական փորձերի միջոցով։

Ի. Պ. Պավլովի ծառայությունն այս խնդրում եղավ այն, որ նա բացահայտեց, այսպես կոչված, «պսիխիկ սեկրեցիայի» ֆիզիոլոգիական մեխանիզմը, ցույց տալով գլխի ուղեղի կեղևի դերը այդ պրոցեսում։ Դրանով իսկ նա չափազանց մեծ ավանդ մտցրեց մատերիալիստական ուսմունքի մեջ։

Ի. Պ. Պավլովը կենդանու ռեֆլեքսները բաժանեց 2 խմբի՝ բնածին կամ անպայման և ձեռք բերովի կամ պայմանական։ Ծծելու, ծամելու, կուլ տալու, ցավից ծայրանդամը ծալելու և այլ ռեֆլեքսները նա անվանեց բնածին։ Իսկ պայմանական ռեֆլեքսները օրգանիզմի մեջ կենդանու կենսափորձի հետևանքով կուտակված անհատական ռեֆլեքսներն են։ Այսպես, օրինակ, Ի. Պ. Պավլովի աշակերտներից մեկը՝ Ս. Ծիտովիչը շան նորածին ձագերին մեծացրեց անմիս սնունդով, ապա հեռվից նրանց միս ցույց տալով առանձին ռեակցիա չնկատեց, բայց մի անգամ նրանց մսով կերակրելուց հետո, արդեն, միայն մսի հոտը, տեսքը, նրանց մոտ առաջացրին ուժեղ թքազատություն։

Իվան Պետրովիչին հաջողվեց պայմանական ռեֆլեքսների ուսումնա-

սիրության ճանապարհով բացահայտել ուղեղի կեղևում ընթացող մի շարք օրինաչափ պրոցեսներ, որոնք տեղի են ունենում ուղեղի նորմալ գործունեության ժամանակ։ Պայմանական ռեֆլեքսների ուսմունքը Ի. Պ. Պավլովին հնարավորություն տվեց պարզելու կենդանու ներվային սիստեմի առանձնահատկությունները, տիպերը, ինչպես և ժառանգության հետ կապված որոշ հարցեր։ Դեռ 1903 թվին Ի. Պ. Պավլովը հայտնում է այն միտքը, որ ձեռք բերովի հատկությունները (պայմանական ռեֆլեքսները) փոխանցվում են ժառանգաբար։ Այժմ այդ հարցը սովետական ֆիզիոլոգների առաջնակարգ խնդիրներից մեկն է հանդիսանում։

Ի. Պ. Պավլովը, նույն ժամանակաշրջանում, մատնանշում է նաև այն հանգամանքը, որ պայմանական ռեֆլեքսների ուսմունքը հետագայում դառնալու է այն հենքը, որի վրա հյուսվելու է հոգեբանությունը։ Պայմանական ռեֆլեքսների միջոցով գրգռականության և արգելակման պրոցեսների ուսումնասիրությամբ Ի. Պ. Պավլովը պարզեց հիպնոզի և քնի ֆազային պրոցեսը։ Նա բացատրեց ներվային բջջի հյուծվածության դեպքում (հոգեկան և ներվային հիվանդների) երկարատև քնի բուժիչ ազդեցությունը։ Կենտրոնական ներվային սիստեմի նկատմամբ հավաքված հարուստ մատերիալը, ներվային գործունեության տիպերի ուսմունքը, քնի հարցի մասին կուտակված փաստական մատերիալը, փորձնական նևրոզները գիտությանը այդ նախային հնարավորություն տվեցին խորանալու ներվային-հոգեկան հիվանդությունների պատճառների մեջ, ֆիզիոլոգիական տեսակետից վերլուծելու որոշ հիվանդությունների մեխանիզմը, միաժամանակ նշելով նրանց բուժման ուղիները։

ՍՍՌՄ-ի բժշկական ակադեմիաների միացյալ սեսիան ամենայն խորությամբ ցույց տվեց ռուս հանճարեղ ֆիզիոլոգ Ի. Պ. Պավլովի ուսմունքի հսկայական դերը առաջավոր գիտության համար։

Մտքի այդ տիտանը ոչ միայն ֆիզիոլոգիայում նոր էջեր բացեց, այլև ստեղծեց մի ամբողջ ուսմունք, որի համաձայն բժշկական մի շարք դիսցիպլիններ պետք է վերափոխվեն, շատ դոգմաներ պետք է քանդվեն։

Մյուս կողմից պավլովյան ուսմունքը քանդում է իդեալիզմի խարխլված շենքի հիմքերը։

Պավլովյան գիտության գոհար կազմող պայմանական ռեֆլեքսների ուսմունքը թանկարժեք մի գանձ է դիալեկտիկ-մատերիալիստական փիլիսոփայության համար։

Իվան Պետրովիչը կենտրոնական ներվային սիստեմի ուսումնասիրության բնագավառում, յուր աշխատանքներով պարզեց հոգեկան պրոցեսի նյութական հիմքը, դրով մահացու հարված հասցրեց իդեալիզմին։ Նա նոր հարուստ փաստերով ապացուցեց Նյութական աշխարհի օրինաչափ զարգացումը:

Հնարավոր չէ մտածողությունը բաժանել մատերիայից, որը մտածում է:

Պավլովը յուր բազմաթիվ օրինակելի փորձերով ստեղծեց պայմանական ռեֆլեքսների ուսմունքը, որը գիտականորեն հաստատում է դիալեկտիկ մատերիալիզմի լենինյան-ստալինյան ըմբռնումը ուղեղի մասին, րև ուղեղը մտածողության օրգանն է:

Մեծ բնախույզը յուր բազմաթիվ աշխատանքներով ապացուցում է օրգանիզմի միասնությունը, ամբողջականությունը կապված ներքին և արտաքին աշխարհի հետ և, որ կարևորն է, այդ միասնությունը ստեղծողը ինքը կենտրոնական ներվային սիստեմն է, ավելի ճիշտ նրա վերնաշենքը կազմող գլխուղեղի կեղևը։

Այս առթիվ Պավլովը գրում է՝ «Գլխուղեղի կեղևն օրգանիզմում ընթացող կենսական պրոցեսներն իր հսկողության տակ է պահում»։ Բոտկին-Սեչենովի «Ներվիզմը» պավլովյան աշխատանքներում հասավ իրենց բեղմնավոր արդյունքներին և այսօր բժշկականության մեջ, պավլովյան ուսմունքը ամենահզոր զենքն է միչուրինյան բիոլոգիայի հետ Վեյսմանի-Մորգանի ժառանգական տեսության դեմ պայքարելու գործում, տեսություններ, որոնք ռեակցիոն են և ելնում են իդեալիզմի դիրքերից։

Իվան Պետրովիչը, ապացուցելով կենտրոնական ներվային սիստեմի առաջատար դերը բոլոր կենսական պրոցեսներում, նա նույն ղեկավար տեղում է դնում կենտրոնական ներվային սիստեմին և պաթոլոգիական պրոցեսների օրգանիզմի կողմից պայքարի գործում:

Դեռ 1899 թ. Պավլովը ռուս ականավոր կլինիցիստ Բոտկինի հիշատակին նվիրված իր ճառում ասաց «Բժշկականությունն իր վերջնական հաղթանակին կհասնի միայն ֆիզիոլոգիական փորձերի միջոցով»։ Ներկա հոդվածում հնարավոր չէ կանգ առնել Պավլովի աշխատանքների բոլոր կողմերի վրա, բայց ընդհանուր գծերով պետք է մատնանշել, որ պավլովյան ֆիզիոլոգիան տարբերվում է իր նախորդներից։

Պավլովյան ֆիզիոլոգիայի սինթետիկ մեթոդը, ի տարբերություն նախկին անալիտիկ մեթոդի, հնարավոր է դարձնում օրգանիզմի յուրաքանչյուր օրգանը ուսումնասիրել իր բնական պայմաններում, միասնական, փոխհարաբերության մեջ։

Այս տեսակետից պավլովյան ֆիզիոլոգիան հանդիսանում է Սովետական առաջավոր գիտություններից մեկը, որի վրա է հիմնված այսօր մեր Սովետական ողջ բժշկականությունը։

Պավլովյան ուսմունքը հայտնի է համայն աշխարհին։ Դժվար է պատկերացնել որևէ կուլտուրական երկիր, որի քիչ թե շատ գիտնական ֆիզիոլոգները չօգտագործեն պավլովյան մեթոդները և նրա ուսմունքը։

Ժողովուրդների հանճարեղ առաջնորդներ մեծ Լենինը և Ստալինը բարձր են գնահատել Պավլովի աշխատանքները։

Բոլշևիկների պարտիան և կառավարությունը մեծ ուշադրություն են դարձրել ակադեմիկոս Պավլովի աշխատանքներին։

Թե ինչպիսի հոգատարություն է ցուցաբերել Վ. Ի. Լենինը Պավլովի գիտա-հետազոտական աշխատանքները լավ հիմքերի վրա դնելու համար, երևում է ամենքին հանրածանոթ Ժողկոմխորհի 1921 թվի հունվարի 24-ի Լենինի ստորագրությամբ հրատարակված որոշումից, որի 30 տարին օրերս լրացավ։ Այդ որոշումով նախատեսված է մի շարք կազմակերպչական նախաձեռնություններ Պավլովի երկերը հրատարակելու, նրան մթերքներով և բնակարանով ապահովելու, նրա լաբորատորիայում հետազոտական աշխատանքի մաքսիմալ հնարավորություն ստեղծելու համար։ Այդ որոշման իրագործումը ընկեր Լենինը հանձնարարել էր Մ. Գորկուն, առաջարկելով նրան կարճ ժամանակամիջոցում հատուկ հանձնաժողովի միջոցով ստեղծել ամե-

բարենպաստ պայմաններ ապահովելու Պավլովի և նրա աշխատակիցների գիտական աշխատանքները լայն թափով ծավալելու համար։ Լենինը այդ որոշման մեջ նշում է, որ Պավլովի գիտական աշխատանքներն հսկայական նշանակություն ունեն ամբողջ աշխարհի աշխատավորության համար։

Ս. Մ. Կիրովը, ընկեր Ստալինի անմիջական ցուցումով, Լենինգրադի մոտ՝ Կոլտուշույում (այժմյան Պավլով) կառուցեց Պավլովի համար հատուկ ինստիտուտ, որն աշխարհի առաջին ինստիտուտն է պայմանական ռեֆլեքսների ուսումնասիրության համար, որը և իրավամբ կոչվում է պայմանական ռեֆլեքսների մայրաքաղաք։

1935 թ. ֆիզիոլոգների 15-րդ կոնգրեսի ժամանակ, որը տեղի ունեցավ Լենինգրադ-Մոսկվայում, արտասահմանից եկած բազմաթիվ ականավոր ֆիզիոլոգներ բարձր էին գնահատում Պավլովի աշխատանքները։ Այդ կոնգրեսում Պավլովին կոչեցին «աշխարհի ավագագույն ֆիզիոլոգ»։

Պավլովը ոչ միայն ռուս սովետական խոշոր գիտնական է, այլև առաջավոր մատերիալիստական ֆիզիոլոգիայի ավագագույնը։

Պավլովի մատերիալիստական հայացքները բխում են անցյալ դարի ռուս լուսավորիչ դեմոկրատներ Բելինսկու, Գերցենի, Պիսարևի հայացքներից (ինչպես Պիսարևի մասին Պավլովն է գրում)։

Պավլովը սիրում էր իր ժողովրդին, իր հայրենիքը, նա իր ժողովրդի մեջ տեսնում էր առաջավոր մարդկության բարձր հատկությունները։ Ի. Պ. Պավլովն իր Սովետական հայրենիքը բարձր է գնահատել այլ երկրներից։ Նա պարծենում էր իր հզոր հայրենիքի, բոլշևիկյան պարտիայի և Սովետական կառավարության հոգատար վերաբերմունքով և հարգանքով դեպի մարդը, դեպի գիտությունը։

Ես հիշում եմ, 1935 թ. ֆիզիոլոգների միջազգային 15-րդ կոնգրեսում Պավլովը դիմելով օտարերկրյա պատգամավորներին, ասաց.— «Դուք լսեցիք և տեսաք, թե ինչպիսի պատվավոր տեղ է գրավում գիտությունը իմ հայրենիքում»։

Մյուս կողմից Իվան Պետրովիչը պարծենում էր իր մեծ հայրենիքի, իր հզոր պետության ուժերով և երախտագիտության անսահման զգացմունքով և հպարտությամբ էր նշում Սովետական կառավարության խաղաղասեր քաղաքականությունը։

Իվան Պետրովիչ Պավլովի հայրենասիրության բուռն տենչերը ձուլվում են առաջավոր մարդկության բարձր ձգտումների հետ։

Որպես մեծ հումանիստ, նա այդ կոնգրեսի օտարերկրյա պատգամավորներին կոչ էր անում իրենց երկրները վերադառնալով մեծ ագիտացիա անել հանուն խաղաղության։

Իվան Պետրովիչը, որպես հետազոտող, ռուսական և սովետական ֆիզիոլոգիայի դպրոցի ղեկավար և մտածող գիտնական, գտնվում էր առաջավոր գիտության համար մղվող պայքարի դիրքերում։

Հայտնի է այն փաստը, որ Պավլովը Ամերիկայում գտնված ժամանակ մասնակցելով նևրոլոգների և պսիխոլոգների համագումարին, բանավեճի է բռնվում ժառանգականության ռեակցիոն ուսմունքի հիմնադիր Մորգանի հետ և գլխովին ջախջախում նրան։

1933 թվին Պավլովը յուր աշակերտների հետ սեմինար պարապմունք-

ների ժամանակ, ես հիշում եմ թե ինչպես նա իր դիալեկտիկական-մատերիալիստական հայացքներով ամերիկացի իդեալիստ «գիտնական» Լեշլիին սպանիչ քննադատության ենթարկեց.

Մենք հպարտ ենք նրանով, որ մեր Սովետական հայրենիքը տալիս է գիտնականներ, որոնք փայլում են համաշխարհային հռչակով.

Ռուս մեծ ժողովուրդն իրավունք ունի հպարտանալու իր արժանի զավակով։ Երջանիկ է սովետական գիտնականը, ինչպես Ի. Պ. Պավլովն է եղել, քանի որ «...մեր հայրենիքը լայն ասպարեզ է բացում գիտնականների առջև և հարկավոր է պատշաճը հատուցել՝ մեր երկրում գիտությունն առատորեն մտցնում են կյանքի մեջ, վերին աստիճանի առատորեն»։

Ի. Պ. Պավլովն այն ռուս հանճարեղ գիտնականներից մեկն է, որը դրել է գիտության մեջ ամուր հիմքեր, ստեղծելով հոյակապ ու ամբողջական մի ուսմունք, որոնց վրա այժմ բարձրանում է աշխարհի ամենամեծ խաղաղասեր, մեծ Ստալինի ամուր ձեռքերում գտնվող, սոցիալիզմի նոր երկրի գիտության հոյակապ շենքը։

Հայկական ՍՍՌ ԳԱ
Ֆիզիոլոգիայի ինստիտուտ

Աստվածյան Է. 14 I 1951